<tr><td>12</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ</td><td>Ներկայացված ծրագրի իրականացման շրջանակներում «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը համագործակցում է գյուղական և քաղաքային տեղական ինքնակառավարման մարմինների հետ, ինչպես նաև 196 համայնքներում գործող դպրոցների և մանկապարտեզների հետ:</td></tr>
<tr><td>13</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>Ծրագրի ամենամյա վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Տարածքային Զարգացման Ծրագրերի գրասենյակների աշխատակիցների կողմից, ինչպես նաև Հովանավորության բաժնի մասնագետների կողմից:<br>«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև հարկային մարմինների կողմից:<br>Հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:</td></tr>
</table>

Մանուշակ Մուրադյան

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Հովանավորության բաժնի ղեկավար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 փետրվարի 2012 թվականի N Մ-126-Ա**
**քաղ. Երևան**

## «ՏԱՇԻՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՎԵՀԱՐԱՆԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՀԼԻՃԻ ՇԵՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ ՀԱՐԴԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 3-ի N 3/3.8-1/1214-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հունվարի 23-ի N 254-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 18-ի N ԱԱ/3-4/369-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 822940000 դրամ ընդհանուր արժողությամբ «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի (ՀՎՀՀ՝ 04703401) և «Դալմա Շին» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 07203422) հետ 2011 թվականի հոկտեմբերի 17-ին կնքված՝ N 2 եռակողմ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի համար նախատեսված համաշինարարական կառուցապատման աշխատանքների իրականացում՝ 605940000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Տաշիր» բարեգործական հիմնադրամին՝



1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Տաշիր» բարեգործական հիմնադրամի
Հոգաբարձուների խորհրդի կողմից
(արձանագրություն թիվ 01/11)
31 հունվարի 2012թ.

Հիմնադրամի տնօրենի պաշտոնակատար
Աշոտ Վարոսյան

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի
արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացման

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | «Տաշիր» բարեգործական հիմնադրամի ֆինանսական միջոցներով կառուցվել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքը և անհրաժեշտություն է առաջացել իրականացնել այդ շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքներ: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | **«Տաշիր» բարեգործական հիմնադրամ**<br>(ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481, հեռ. (+374-10) 54-53-05,<br>ֆաքս՝ (+374-10) 54-54-35, էլ. փոստ՝ a-varosyan@mail.ru) |
| 4. | Ծրագիրը կատարողը | **«Տաշիր» բարեգործական հիմնադրամ**<br>(ՀՀ, քաղ. Տաշիր, Ջահուկյան 10, ՀՎՀՀ՝ 07203481, հեռ. (+374-10) 54-53-05,<br>ֆաքս՝ (+374-10) 54-54-35, էլ. փոստ՝ a-varosyan@mail.ru) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, հոգևոր բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 928.400.000 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանություն |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2011 թվականի հոկտեմբերի 17 – 2013 թվականի դեկտեմբերի 30 |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը և ժամկետները | 1. արտաքին երեսապատման և քանդակագործական աշխատանքներ – 249.000.000 դրամ<br>2. պատուհանների և դռների պատրաստում ու տեղադրում – 95.000.000 դրամ<br>3. տանիքի կառուցման աշխատանքներ – 38.200.000 դրամ<br>4. պատերի կառուցում, հատակների և աստիճանավանդակների երեսապատում – 204.200.000 դրամ<br>5. ներքին հարդարման աշխատանքներ – 63.500.000 դրամ,<br>6. տարածքի բարեկարգում – 56.440.000 դրամ,<br>7. հեղինակային հսկողություն – 4.600.000 դրամ<br>8. ինժեներական կոմունիկացիաների կառուցում - 215.000.000 դրամ,<br>9. Կազմակերպչական ծախսերը - 2.460.000 դրամ<br>* Նշված աշխատանքների իրականացման ժամկետը սահմանված է մինչև 30.12.2013թ. |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալվում է ծառայությունների մատուցման և աշխատանքների իրականացման, նյութերի, սարքավորումների և այլ ապրանքների ներմուծման ու ՀՀ տարածքում ձեռքբերման դիմաց հարկային արտոնություններ, մասնավորապես.<br>1. «Օրիենթ Սթոն» ՍՊԸ-ի կողմից տուֆ քարե դետալների մատակարարում «Դալմա-Շին» ՍՊԸ-ին – 52.662.000 դրամ<br>2. «Յուրիկ-Դավիթ» ՍՊԸ-ի կողմից 2400ք/մ ընդ. մակերեսով տուֆ քարե սալիկների մատակարարում «Դալմա-Շին» ՍՊԸ-ին – 16.800.000 դրամ<br>3. «Հ. Հովհաննիսյան և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից տուֆ քարե դետալների մատակարարում «Դալմա-Շին» ՍՊԸ-ին – 20.658.000 դրամ<br>4. Արտաքին երեսապատման և քանդակագործական աշխատանքներ 2600ք/մ – 144.000.000 դրամ<br>5. օդափոխության համակարգի սարքավորումներ (ներմուծվող) – 175.000.000 դրամ<br>6. օդափոխության համակարգի հավաքման համար այլ նյութեր - 61.940.000 դրամ<br>7. Պատուհաններ 648ք/մ (121 հատ) - 62.000.000դրամ<br>8. Դռներ 105ք/մ (48 հատ) - 33.000.000 դրամ<br>9. Տանիք ջրամեկուսացման համար նյութեր 1380ք/մ - 38.200.000 դրամ<br>10. Հատակների երեսպատման աշխատանքներ բազալտից, մարմարից և գրանիտից 3580ք/մ - 152.000.000 դրամ<br>11. Պատեր և միջնորմներ 540խ/մ - 7.700.000 դրամ<br>12. Աստիճանների երեսպատման աշխատանքներ բազալտից, մարմարից և գրանիտից 140ք/մ - 44.500.000 դրամ<br>13. Ներքին հարդարման աշխատանքների համար ներկանյութեր 5680ք/մ - 63.500.000 դրամ<br>14. Տարածքի բարեկարգում 4270ք/մ – 56.440.000 դրամ<br>15. Հեղինակային հսկողություն – 4.600.000 դրամ<br>16. Կազմակերպչական ծախսերը - 2.460.000 դրամ |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Նախատեսվող կազմակերպչական ծախսերը կկազմեն 2.460.000 դրամ՝ այդ թվում բեռները ավտոտրանսպորտային միջոցներով տեղափոխելու ծախսերը: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական բաժնի հետ |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ օրենքով սահմանված կարգով՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից, ինչպես նաև տեղեկատվություն կներկայացվի ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին ծրագրի ընթացքի և ավարտի վերաբերյալ: Նախատեսվում է տեխնիկական հսկողություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների կողմից: |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**5 մարտի 2012 թվականի N Մ-127-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2012 թվականի փետրվարի 24-ին)**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՊՈՒՐԱԿԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2012 թվականի փետրվարի 22-ի N 07/07.1/885-12, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 22-ի N 3/3.8-1/1969-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի մարտի 2-ի N 02/1252-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 21-ի N ԱԱ/3-4/1439-12 և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 22-ի N 01/15/767-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 3525459 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի կենտրոնական պուրակի բարեկարգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝



«Արաման սթոուն սթայլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 80207707) 2012 թվականի հունվարի 27-ին կնքված՝ N WVA/GAV ADP/CW-12/003 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պուրակի բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 3525459 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին ու Գավառի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության

հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Գրահամ Սթրոնգի կողմից

«10» Փետրվար. 2012թ.

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի կենտրոնական պուրակի բարեկարգում»

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Գավառ քաղաքի երեխաների համար ժամանցի պայմանների բարելավումը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Վորլդ Վիժն Թայվան աջակցող գրասենյակ,<br>հասցե՝ Վորլդ Վիժն Թայվան, 6Ֆ, 133, Մին-Շենգ Իստ Ռոադ, Թայպեյ 105, Թայվան,<br>հեռախոս՝: +886-2-2175-1995 |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը<br>*հասցե*՝ք. Երևան, Ռ.Մելիքյան 1 ՀՎՀՀ՝ 02528755 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ Գեղարքունիք մարզ Գավառ համայնք: Բնագավառը՝ սոցիալական: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է **3.525.459** Դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող է հանդիսանում ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Գավառի մանկատուն ՊՈԱԿ-ը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.Հունիս. 2012 թ. – 31.Օգոստոս. 2012թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | **Միջոցառումների նկարագրությունը** / **ժամկետները** / **անհրաժեշտ ֆինանս. միջոցներ**<br>Գավառի կենտրոնական պուրակի բարեկարգմանն ուղղված շինանարական աշխատանքների իրականացում / Հունիս-Օգոստոս 2012թ. / **3.525.459** դրամ |



| | | |
|---|---|---|
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Գավառ համայնքի կենտրոնական պուրակի բարեկարգման և կառուցապատման աշխատանքները իրականացվելու են բաց մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված Արաման Սթռուն Սթայլ ՍՊԸ կողմից:<br>Գավառ համայնքի կենտրոնական պուրակի բարեկարգման համար նախատեսված է **3.525.459** դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է Գավառի քաղաքապետարանի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Գավառի մանկատուն ՊՈԱԿ-ի հետ համագործակցությամբ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

Հուսիկ Սարգսյան

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Գեղարքունիքի զարգացման ծրագրի ղեկավար

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 փետրվարի 2012 թվականի N Մ-128-Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԾԱՂԿԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ՆԵՐՔԻՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2012 թվականի փետրվարի 22-ի N 07/07.1/884-12, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 20-ի N 3/3.8-1/1889-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի փետրվարի 22-ի N 02/1026-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 16-ի N ԱԱ/3-4/1290-12 և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2012 թվականի փետրվարի 22-ի N 01/15/769-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 5166216 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն համայնքի խմելու ջրի ջրագծի ներքին ցանցի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արաման սթոուն սթայլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 80207707) 2012 թվականի հունվարի 27-ին կնքված՝ N WVA/GAV ADP/CW-12/004 պայմանագրում նշված գործարքը, որով



նախատեսվում է ջրագծի հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ 5166216 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության

հայաստանյան մասնաճյուղի տնօրեն Գրահամ Սթրոնգի կողմից

«27» փետրվարի, 2012թ.

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն համայնքի խմելու ջրի ներքին ցանցի վերանորոգում»

# ԾՐԱԳԻՐ

<table>
<tr><td>1.</td><td>Ծրագրի նպատակը</td><td>Ծրագրի նպատակն է աջակցել Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն համայնքին բարելավելու խմելու ջրի մատակարարման ներհամայնքային համակարգերը</td></tr>
<tr><td>2.</td><td>Ծրագրի բարեգործական որակման նպատակը</td><td>Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:</td></tr>
<tr><td>3.</td><td>Բարեգործը</td><td>Վորլդ Վիժն Թայվան աջակցող գրասենյակ,<br>հասցե՝Վորլդ Վիժն Թայվան, 6Ֆ, 133, Մին-Շենգ Իստ Ռոադ, Թայպեյ 105, Թայվան,<br>հեռախոս՝: +886-2-2175-1995</td></tr>
<tr><td>4.</td><td>Ծրագիրը կատարողը</td><td>«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>հասցե՝ ք. Երևան, Ռ.Մելիքյան 1 ՀՎՀՀ՝ 02528755</td></tr>
<tr><td>5.</td><td>Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը</td><td>Իրականացման վայրը՝ Գեղարքունիքի մարզ, Ծաղկաշեն համայնք:<br>Բնագավառը՝ ջրամատակարարում:</td></tr>
<tr><td>6.</td><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 5166216 դրամ:</td></tr>
<tr><td>7.</td><td>Բարեգործություն ստացողը</td><td>Բարեգործություն ստացող է հանդիսանում Գեղարքունիքի մարզի Ծաղկաշենի գյուղապետարանը.</td></tr>
<tr><td>8.</td><td>Ծրագրի իրականացման տևողությունը</td><td>01 մայիսի 2012թ. – 30 հունիսի 2012թ.</td></tr>
<tr><td>9.</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td><table><tr><th>Միջոցառումների նկարագրությունը</th><th>ժամկետները</th><th>անհրաժեշտ ֆինանս. միջոցներ</th></tr><tr><td>Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն համայնքի խմելու ջրի մատակարարման ներքին համակարգի վերանորոգման/ վերականգնման աշխատանքների իրականացում</td><td>մայիս– հունիս, 2012թ.</td><td>5166216 դրամ</td></tr></table></td></tr>
</table>

2

<table>
<tr><td>10.</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն համայնքի խմելու ջրի մատակարարման ներքին համակարգի վերանորոգման աշխատանքները իրականացվելու է բաց մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված Արաման Սթոուն Սթայլ ՍՊԸ կողմից:<br>Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն համայնքի խմելու ջրի մատակարարման ներքին համակարգի վերանորոգման համար նախատեսված է 5166216 դրամ:</td></tr>
<tr><td>11.</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:</td></tr>
<tr><td>12.</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ</td><td>«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան հասնաճյուղը այս ծրագիրն իրականացնելու է Գեղարքունիքի մարզի Ծաղկաշեն համայնքի հետ համագործակցությամբ:</td></tr>
<tr><td>13.</td><td>Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>«Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություններ կներկայացվեն ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:</td></tr>
</table>

Հուսիկ Սարգսյան

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ»

միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի

Գեղարքունիքի զարգացման ծրագրի ղեկավար

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ու Մ

**24 փետրվարի 2012 թվականի N Մ-129-Ա**
**քաղ. Երևան**

### «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՄԱՇԵՆ ԳՅՈՒՂԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱՅԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության 2012 թվականի փետրվարի 22-ի N 07/07.1/886-12, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 22-ի N 3/3.8-1/1968-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի փետրվարի 22-ի N 02/1025-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի փետրվարի 17-ի N ՀՔ/22/1255-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 21-ի N ԱԱ/3-4/1440-12 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի փետրվարի 20-ի N 01/695-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 3 մլն դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մարմաշեն գյուղի բժշկական ամբուլատորիայի վերանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին»



Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
"Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ" միջազգային բարեգործական
կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղի
տնօրեն՝ Գրեհեմ Սթրոնգի կողմից
«...12...» ...փետրվարի... 2012թ

Շիրակի մարզի Մարմաշեն գյուղի բժշկական ամբուլատորիայի վերանորոգում

# ԾՐԱԳԻՐ

<table>
<tr><td>1</td><td>Ծրագրի նպատակը</td><td>Բարելավել ՀՀ Շիրակի մարզի Մարմաշեն գյուղի բժշկական ամբուլատորիայի սանիտարահիգիենիկ պայմանները, որը սպասարկում է մարզի Մարմաշեն, Վահրամաբերդ և Կապս համայնքների բնակիչներին:</td></tr>
<tr><td>2</td><td>Ծրագրի բարեգործական որակման նպատակը</td><td>Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:</td></tr>
<tr><td>3</td><td>Բարեգործը</td><td>Վորլդ Վիժն ԱՄՆ գրասենյակ, հասցե՝ 34834 Վեերհուզեր Վեյ Սաութ, Ֆեդերալ Վեյ, ՎԱ 98001, ԱՄՆ, հեռախոս՝ 1-888-511-6548</td></tr>
<tr><td>4</td><td>Ծրագիրը կատարողը</td><td>Ծրագիրն անմիջականորեն կատարողն է հանդիսանում Վորլդ Վիժն Ինթերնեշնլ միջազգային բարեգործական կազմակերպության Հայաստանյան մասնաճյուղը (հասցե՝ Երևան, Ռոմանոս Մելիքյան 1; ՀՎՀՀ 02528755):</td></tr>
<tr><td>5</td><td>Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը</td><td>Իրականացման վայրը՝ Շիրակի մարզ, գյուղ Մարմաշեն, «Մարմաշենի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ:<br>Բնագավառը՝ առողջապահական:</td></tr>
<tr><td>6</td><td>Ծրագրի բյուջեն</td><td>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 3 000 000 դրամ:</td></tr>
<tr><td>7</td><td>Բարեգործություն ստացողը</td><td>Բարեգործություն ստացող է հանդիսանում ՀՀ Շիրակի մարզպետարանի «Մարմաշենի բժշկական ամբուլատորիա» ՓԲԸ-ն, ՀՎՀՀ 05802299, որը ընտրվել է Շիրակի մարզի Մարմաշեն համայնքի բնակիչների դիմումի համաձայն</td></tr>
<tr><td>8</td><td>Ծրագրի իրականացման տևողությունը</td><td>01 մարտ 2012- 01 օգոստոս 2012</td></tr>
<tr><td>9</td><td>Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը</td><td><table>
<tr><td>Միջոցառումների նկարագրությունը</td><td>ժամկետները</td><td>անհրաժեշտ ֆինանս. միջոցներ</td></tr>
<tr><td>Բաց մրցույթի կազմակերպում և վերանորոգման աշխատանքներն իրականացնող կապալառուի ընտրություն</td><td>01 մարտ 2012թ.- 02 ապրիլ 2012թ.</td><td>չի պահանջվում</td></tr>
<tr><td>Կապալառու կազմակերպությունների հետ պայմանագրերի կնքում՝</td><td>02 ապրիլ 2012թ.- 20 ապրիլ 2012թ.-</td><td>չի պահանջվում</td></tr>
<tr><td>Մարմաշենի բժշկական ամբուլատորիայի վերանորոգում</td><td>02 մայիս 2012թ – 01 օգոստոս 2012</td><td>3’000’000 դրամ</td></tr>
</table></td></tr>
</table>

<table>
<tr><td>10</td><td>Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը</td><td>Ծրագրի շրջանակներում նախատեսվող վերանորոգման աշխատանքների ամբողջ ծավալը կիրականացվի մրցույթով ընտրված մասնագիտացված շինարարական կազմակերպության կողմից, որի հետ կկնքվի համապատասխան կապալի պայմանագիր, 3000000 դրամ նախատեսվող արժեքով (ակնկալվում է գործարքի շրջանակներում ավելացված արժեքի հարկի վճարումից ազատում):<br>Ծրագրի իրականացման ընթացքում կապալառուի կողմից Մարմաշենի բժշկական ամբուլատորիայում իրականացվելու են հետևյալ աշխատանքները<br>• 2 զուգարանների վերանորոգում, մասնավորապես՝ պատերի և հատակի սալիկապատում, պատերի և առաստաղի ներկում, նոր լվացարանների, զուգարանակոնքերի և դռների տեղադրում, նոր ջրագծերի և կոյուղագծերի տեղադրում<br>• Բոլոր սենյակների կոսմետիկ վերանորոգում, դռների և պատուհանների ներկում</td></tr>
<tr><td>11</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը</td><td>Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն:</td></tr>
<tr><td>12.</td><td>Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ</td><td>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը ծրագիրն իրականացնելու է ՀՀ Շիրակի մարզպետարանի և Մարմաշենի գյուղապետարանի հետ համագործակցությամբ:</td></tr>
<tr><td>13</td><td>Ծրագրի արդյունավետության գնահատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը</td><td>Ծրագրերի իրականացման ընթացիկ վերահսկողությունը կիրականացվի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կենտրոնական գրասենյակի և վերջինիս Գյումրիի Տարածքային Զարգացման Ծրագրի գրասենյակի կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը Մարմաշենի գյուղապետարանի հետ համատեղ կիրականացնեն վերանորոգման աշխատանքների կանոնավոր վերահսկումը:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև ՀՀ հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով:</td></tr>
</table>

Գրահամ Սթրոնգ

/12/.......02.../2012

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**29 փետրվարի 2012 թվականի N Մ-130-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2012 թվականի փետրվարի 24-ին)**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԿԱՊԵՐ ԵԿԵՂԵՑՈՒ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 17-ի N 3/3.8-1/1862-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի փետրվարի 16-ի N 02/872-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի փետրվարի 20-ի N 03/07-1/1667-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 14-ի N ԱԱ/3-4/1156-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 204200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Կապեր եկեղեցու և կառավարության հետ» ծրագիրը (կցվում է):

2. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգ-



ման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի ու Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» մրկ Հայաստանյան մասնաճյուղի
տնօրեն Գրահամ Սթրոնգ
27.02.2012

# «Կապեր Եկեղեցու և Կառավարության հետ»
# Ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակները հետևյալն են:<br>Ա- «Երիտասարդների Աստվածաշնչի Ուսուցում» ենթածրագրի շրջանակներում Հայ Առաքելական Եկեղեցու հետ համատեղ պատրաստել ձեռնարկներ, որոնք կծառայեն որպես Աստվածաշունչը ուսումնասիրելու լրացուցիչ աղբյուրներ կիրակնօրյա դպրոցների երեխաների և ուսուցիչների համար:<br>Բ- «Եկեղեցին Համայնքների Համար» ենթածրագրի շրջանակներում համագործակցել համայնքային եկեղեցիների հետ(Հայ Առաքելական, Հայ Կաթոլիկ և Հայ Ավետարանական եկեղեցիներ) աջակցելով նրանց՝ համայնքների սոցիալական և հոգևոր կարիքները հոգալու: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3 | Բարեգործը | Վորլդ Վիժն ԱՄՆ, հասցե՝ 34834 Weyerhaeuser Way So. Federal Way, WA 98001 հեռախոս՝ +1-888-511-6548 |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>(հասցե՝ ք. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ 02528755): |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրը իրականացվելու է Երևան քաղաքում և Հայաստանի Հանրապետության Սյունիքի, Արագածոտնի, Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի և Տավուշի մարզերում:<br>Բնագավառը՝ հոգևոր |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 204200 ԱՄՆ Դոլարին համարժեք դրամ |
| 7 | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներն են Կապանի, Սիսիանի, Վարդենիսի, Գավառի, Թալինի, Իջևանի, Ստեփանավանի, Գյումրիի եւ Ալավերդու Տարածքային Զարգացման Ծրագրերում ընդգրկված 24000 երեխաներն ու կիրակնօրյա դպրոցների 200 ուսուցիչները:<br>Ա - «Երիտասարդների Աստվածաշնչի Ուսուցում» ենթածրագրի շահառուներն են «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Տարածքային Զարգացման Ծրագրերի կիրակնօրյա դպրոցների 24000 երեխաներն ու կիրակնօրյա դպրոցների 200 ուսուցիչները:<br>Բ – «Եկեղեցին Համայնքների Համար» ենթածրագրի շահառուներն են բոլոր վերոհիշյալ մարզերի ծխական եկեղեցիները և համայնքները, որոնք ընդգրկված են Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական |
| | | կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Տարածքային Զարգացման Ծրագրերում: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 Փետրվարի, 2012թ. – 31 Հունվարի, 2013թ. |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ա. «Երիտասարդների Աստվածաշնչի Ուսուցում» ենթածրագրի ներքո<br>- Ընդամենը տպագրվելու է 10000 ուսումնական ձեռնարկ 16 տարեկան երեխաների համար և ընդամենը 1000 ուսուցչի ուղեցույց՝ 16 տարեկան երեխաների ուսումնական ձեռնարկների համար:<br>- Մանկական քրիստոնեական գրականության գնում «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Տարածքային Զարգացման Ծրագրերի երեխաների համար. և՛ տպագրվող, և՛ թե գնված գրականության բովանդակությունը կհամաձայնեցվի Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հետ:<br>- Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի հետ համատեղ իրականացվելու է կիրակնօրյա դպրոցի ուսուցիչների մեկշաբաթյա վերապատրաստում:<br>-Ենթածրագրի համար նախատեսվում է ծախսել 44200 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:<br><br>Բ.«Եկեղեցին Համայնքների Համար» ենթածրագրի շրջանակներում նաև ընդլայնվելու են համայնքների զարգացման ծրագրերը, որոնց համար նախատեսվում է 160000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Կազմակերպության կողմից իրականացվող ցանկացած գործարք կամ ծառայություն, որի գինը 800000 դրամից բարձր է, որոշվում է մրցույթային հիմունքներով: Այդ իսկ պատճառով որոշ գործարքներ հնարավոր չէ նախապես ներկայացնել, այլ կներկայացվեն որպես հարակից գործարք:<br>Ա. «Երիտասարդների Աստվածաշնչի Ուսուցում» ենթածրագրով նախատեսվում է տպագրել հետևյալ քանակությամբ աշակերտական դասագրքեր և ուսուցչի ձեռնարկներ.<br>16 տարեկան երեխաների դասագիրք, մաս II՝ 10000 օրինակ, մեկ գրքի արժեքը մոտավորապես 1.2 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, ընդհանուր արժեքը 12000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>16 տարեկան երեխաների դասագրքի մաս II-ի համար ուսուցչի ձեռնարկ՝ 1000 օրինակ, մեկ գրքի արժեքը մոտավորապես 1.2 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, ընդհանուր արժեքը 1200 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ<br>Տպագրական աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է 13200 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:<br><br>- Մանկական քրիստոնեական գրականության գնում «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Տարածային Զարգացման Ծրագրերի երեխաների համար որի համար նախատեսվում է ծախսել 7000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:<br><br>- Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի Քրիստոնեական Դաստիարակության Կենտրոնի հետ համատեղ իրականացվելու է կիրակնօրյա դպրոցների մոտ 200 ուսուցիչների մեկշաբաթյա վերապատրաստում Ծրագրի իրականացման բոլոր տարածքների կիրակնօրյա դպրոցների ուսուցիչների մասնակցությամբ, որի համար նախատեսվում է ծախսել 24000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ:<br><br>Բ. «Եկեղեցին Համայնքների Համար» ենթածրագրի շրջանակներում նախատեսվում է ընդլայնել համայնքներում գործող ընթացիկ ծրագրերը, որոնց ընդհանուր արժեքը կկազմի 160000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, որի |

| | | |
|---|---|---|
| | | մանրամասները ներկայացնում ենք ստորեւ.<br><br>12000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ` Եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան միջեկեղեցական բարեգործական Կլոր Սեղան հիմնադրամի հետ համատեղ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Տարածքային Զարգացման Ծրագրերից առնվազն 20 հոգևորականների սոցիալական ծառայության պիլոտային ծրագրեր իրականացնելու վերապատրաստման համար:<br>65000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ` «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Տարածքային Զարգացման Ծրագրերում ընդգրկված և վերոհիշյալ վերապատրաստմանը մասնակցած առնվազն 20 հոգևորականների կողմից ներկայացված պիլոտային ծրագրերի իրականացման համար:<br>46000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Տարածքային Զարգացման Ծրագրերից 450 երեխաների համար ճամբարների կազմակերպման համար: Ճամբարների իրագործման համար նախատեսված ֆինանսական միջոցները կօգտագործվեն ըստ Տարածքային Զարգացման Ծրագրի կարիքների առաջնահերթության:<br>37000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Տարածքային Զարգացման Ծրագրերում կիրակնօրյա դպրոցների և ակումբների տարածքների վերանորոգման, ինչպես նաև տեխնիկական և կենցաղային պիտույքներով համալրելու համար: Ֆինանսական միջոցները նախատեսվում են օգտագործել կազմակերպության ցանկացած Տարածքային Զարգացման Ծրագրերում` ըստ կարիքի չափի և ներկայացված ծրագրի իրատեսականության: |
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակեր-պական ծախսերը | Վերոհիշյալ գումարները միայն անմիջական ծրագրային ծախսերի գումարներ են, քանի որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը իր կազմակերպչական գործունեության համար առանձին գումարներ ստանում է: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավար-ման և այլ մարմինների հետ | Ծրագիրը համագործակցում է Հայ Առաքելական, Հայ Կաթոլիկ և Հայ Ավետարանական Եկեղեցիների, ինչպես նաև Շիրակի, Լոռվա, Գեղարքունիքի, Սյունիքի, Տավուշի եւ Արագածոտնի մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների հետ Տարածքային Զարգացման Ծրագրերի գրասենյակների միջոցով: |
| 13 | Ծրագրի արդյունավետու-թյան նկատմամբ վերահսկո-ղության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Երևանյան գրասենյակի, ինչպես նաև միջազգային աուդիտի եւ հարկային մարմինների կողմից: Տարեկան հաշվետվություն կներկայացվի ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

«Վորլդ վիժն ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի
Եկեղեցու և Կառավարության հետ կապերի բաժնի ղեկավար`
Կարինե Հարությունյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 փետրվարի 2012 թվականի N Մ-131-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N Մ-289-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՈՒ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպություն)**

*Հայասփանի Հանրապեփության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայասփանի Հանրապեփության ֆինանսների նախարարության 2012 թվականի փեփրվարի 14-ի N 3/3.8-2/1625-12 և Հայասփանի Հանրապեփության կառավարությանն առընթեր պեփական եկամուփների կոմիփեի 2012 թվականի փեփրվարի 10-ի N ԱԱ/3-6/1062-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի «Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Մանկապատանեկան ֆուտբոլի ակադեմիայի վերակառուցման և հագեցման» ծրագրի մասին» N Մ-289-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «903000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերը փոխարինել «904555 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագրի 8-րդ կետում «2011 թվականի դեկտեմբեր» բառերը փոխարինել «2012 թվականի մարտ» բառերով.

3) որոշմանը կից ծրագրի 9-րդ կետի 3-րդ ենթակետում «(ապրիլ - մայիս) - 35000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերը փոխարինել «(2011 թվականի դեկտեմբեր - 2012 թվականի հունվար) – 36555.01 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերով.

4) որոշմանը կից ծրագրի 10-րդ կետի 3-րդ ենթակետում «35000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերը փոխարինել «36555.01 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ» բառերով:



2. Սահմանել, որ Ռուսաստանի Դաշնության քաղաքացի Արկադի Տոնոյանի կողմից ձեռք բերված և «Բանանց» ֆուտբոլային ակումբ» հասարակական կազմակերպության հասցեով ուղարկված ֆուտբոլային դաշտի հնձիչ մեքենան՝ իր պահեստամասերով (2 տեղ, 1090 կգ ընդհանուր քաշով, 33080.01 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3475 ԱՄՆ-ի դոլար, «ՄԾՓ» ՏՄ) ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 փետրվարի 2012 թվականի N Մ-132-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13-Ի N Մ-299-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Փյունիկ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 15-ի N 3/3.8-2/1659-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 10-ի N ԱԱ/3-6/1061-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Սահմանել, որ սիրիահայ բարերար Կաբրիել Ռիհանեսի Ղենբերջիի միջոցով Հայաստանի Հանրապետության քաղաքացի Էդգար Գագիկի Գյանջումյանի համար «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված ճառագայթումից պաշտպանող սարքավորումը և պարագաները (4 տեղ, 38 կգ ընդհանուր քաշով, 1353.90 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 255.06 եվրո փոխադրման ծախսերը, «ՄՓ և ՍԱՓԱՄ» ՄՏ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի մայիսի 13-ի «Փյունիկ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծման և անհատույց բաշխման» ծրագրի մասին» N Մ-299-Ա որոշմամբ (2011 թվականի փետրվարի 3-ի N Մ-094-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 փետրվարի 2012 թվականի N Մ-133-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-941-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ**
**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 14-ի N 3/3.8-2/1621-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի փետրվարի 13-ի N ՖԲ/ԱնՄ-5/896-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 13-ի N ԱԱ/3-6/1140-12 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված հնդկացորենը (800 տեղ, 20032 կգ ընդհանուր քաշով, 60400 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 5800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) և շաքարավազը (400 տեղ, 20028 կգ ընդհանուր քաշով, 27200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ 2800 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» ՏՄ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-941-Ա որոշմամբ (2011 թվականի հունիսի 6-ի N Մ-353-Ա, 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-853-Ա և 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-088-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում:



2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Արարատի, Արմավիրի, Գեղարքունիքի, Լոռու, Կոտայքի ու Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

# Բեռի բաշխման ցանկ

ինվոյս 0238 09.01.2012թ.

| N N | Ապրանքի անվանումը | Տեղերի քանակը | Քանակը | Քաշը նետտո /կգ/ | Քաշը բրուտտո /կգ/ | Արժեքը ֆրանկ | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | Արժեքը ըստ փաթեթների / դրամ / |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Հնդկացորեն | արկղ | 800 | | | | Գեղարքունիքի մարզ 814 փաթեթ | Գետիկ 74 | 399,624 |
| | | | | | | | | Այգուտ 164 | 885,654 |
| | | | | | | | | Մարտունի 73 | 394,224 |
| | | | | | | | | Դպրաբակ 81 | 437,427 |
| | | | | | | | | Վահան 188 | 1,015,262 |
| | | | | | | | | Կալավան 23 | 124,208 |
| | | | | | | | | Բարեպատ 6 | 32,402 |
| | | | | | | | | Ջորավանք 31 | 167,410 |
| | | | | | | | | Անտառամեջ 22 | 118,807 |
| | | | | | | | | Գավառ 61 | 329,420 |
| | | | | | | | | Թթուջուր 81 | 437,427 |
| | | | | | | | Արմավիրի մարզ 50 փաթեթ | Արտաշար 51 | 275,417 |
| | | | | | | | Արարատի մարզ 88 փաթեթ | Վեդի 17 | 91,806 |
| | | | | | | | | Արտաշատ 16 | 86,405 |
| | | | | | | | | Գետազատ 39 | 210,613 |
| | | | | | | | | Մրգանուշ 16 | 86,405 |
| | | | | | | | Կոտայքի մարզ 111 փաթեթ | Չարենցավան 13 | 70,204 |
| | | | | | | | | Սևաբերդ 41 | 221,414 |
| | | | | | | | | Ջորաղբյուր 18 | 97,206 |
| | | | | | | | | Աբովյան 38 | 205,213 |
| | | | | | | | Լոռու մարզ 48 փաթեթ | Վանաձոր 48 | 259,216 |
| | | | | | | | Տավուշի մարզ 33 փաթեթ | Դիլիջան 15 | 81,005 |
| | | | | | | | | Իջևան 18 | 97,206 |
| | | | | | | | Երևան քաղաքի շահառուներին բաշխելու համար | 3201 | 17,286,456 |
| | Ընդամենը | | | 20 000 կգ | 20 032 կգ | 5800 ԱՄՆ դոլար ճ/ծ ( 60400 ԱՄՆ դոլարը բեռի արժեքն է) | | 4335 | 23,410,431 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն* Հ. Ղազարյան

# Բեռի բաշխման ցանկ

ինվոյս 0462 23.01.2021թ.

| N N | Ապրանքի անվանումը | Տեղերի քանակը | Քանակը | Քաշը նետտո /կգ/ | Քաշը բրուտտո /կգ/ | Արժեքը ֆրանկ | Շահառուները ըստ մարզերի | Շահառուների քանակը | Արժեքը ըստ փաթեթների / դրամ / |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Շաքարավազ | արկղ | 400 | | | | Գեղարքունիքի մարզ 814 փաթեթ | Գետիկ 74 | 180,246 |
| | | | | | | | | Այգուտ 164 | 399,465 |
| | | | | | | | | Մարտունի 73 | 177,810 |
| | | | | | | | | Դպրաբակ 81 | 197,297 |
| | | | | | | | | Վահան 188 | 457,923 |
| | | | | | | | | Կալավան 23 | 56,022 |
| | | | | | | | | Բարեպատ 6 | 14,615 |
| | | | | | | | | Ջորավանք 31 | 75,509 |
| | | | | | | | | Անտառամեջ 22 | 53,587 |
| | | | | | | | | Գավառ 61 | 148,581 |
| | | | | | | | | Թթուջուր 81 | 197,297 |
| | | | | | | | Արմավիրի մարզ 51 փաթեթ | Արտաշար 51 | 124,224 |
| | | | | | | | Արարատի մարզ 88 փաթեթ | Վեդի 17 | 41,408 |
| | | | | | | | | Արտաշատ 16 | 38,972 |
| | | | | | | | | Գետազատ 39 | 94,995 |
| | | | | | | | | Մրգանուշ 16 | 38,972 |
| | | | | | | | Կոտայքի մարզ 111 փաթեթ | Չարենցավան 13 | 31,665 |
| | | | | | | | | Սևաբերդ 41 | 99,866 |
| | | | | | | | | Ջորաղբյուր 18 | 43,844 |
| | | | | | | | | Աբովյան 38 | 92,559 |
| | | | | | | | Լոռու մարզ 48 փաթեթ | Վանաձոր 48 | 116,916 |
| | | | | | | | Տավուշի մարզ 33 փաթեթ | Դիլիջան 15 | 36,536 |
| | | | | | | | | Իջևան 18 | 43,844 |
| | | | | | | | Երևան քաղաքի շահառուներին բաշխելու համար | 3201 | 7,796,868 |
| | Ընդամենը | | | 20 000 կգ | 20 028 կգ | 2800 ԱՄՆ դոլար ճ/ծ ( 27200 ԱՄՆ դոլարը բեռի արժեքն է) | | 4335 | 10,559,040 |

*«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն* Հ. Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 փետրվարի 2012 թվականի N Մ-134-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 20-ի N 3/3.8-1/1896-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 21-ի N ԱԱ/3-4/1438-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մարշալ Բաղրամյան 40, ՀՎՀՀ՝ 00006479) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության կողմից իրականացվող «Հայկական բարեգործական ընդհանուր միության երևանյան կենտրոնատեղի կառուցում» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշմամբ (2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-092-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ԼԱՎՈ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02577772) 2012 թվականի հունվարի 23-ին կնքված՝ N 03-12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարության աշխատանքային նախագծի փորձաքննության աշխատանքների իրականացում՝ 515000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**24 փետրվարի 2012 թվականի N Մ-135-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-941-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Դիակոնիա» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 14-ի N 3/3.8-1/1647-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 13-ի N ԱԱ/3-4/1136-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից (քաղ. Երևան, Աշտարակի խճուղի, «Հույսի ավան» թաղամաս, ՀՎՀՀ՝ 00068196) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 24-ի «Դիակոնիա» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Օժանդակություն Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական համայնքների ազգաբնակչությանը» ծրագրի մասին» N Մ-941-Ա որոշմամբ (2011 թվականի հունիսի 6-ի N Մ-353-Ա, 2011 թվականի սեպտեմբերի 30-ի N Մ-853-Ա և 2012 թվականի փետրվարի 3-ի N Մ-088-Ա որոշումների խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Լոնդոն բիզնես գրուպ» համատեղ ձեռնարկություն» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01223655) 2012 թվականի հունվարի 23-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հիմնադրամի 2011 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ ուսումնասիրության իրականացում՝ 1000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 փետրվարի 2012 թվականի N Մ-136-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1135-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ**
**(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 20-ի N 3/3.8-1/1906-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 16-ի N ԱԱ/3-4/1278-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Գետահովիտ և Նորաշեն համայնքների մանկապարտեզների ու Պառավաքար համայնքի բուժկետի ջեռուցման համակարգերի ստեղծում» ծրագրի մասին» N Մ-1135-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում և կից ծրագրի 6-րդ, 9-րդ ու 10-րդ կետերում «2920000 դրամ» բառերը փոխարինել «2924600 դրամ» բառերով.

2) ծրագրի 10-րդ կետում «1040000 դրամ» բառերը փոխարինել «1037350 դրամ» և «840000 դրամ» բառերը՝ «849900 դրամ» բառերով.

3) ծրագրի 8-րդ կետում «Նոյեմբեր-դեկտեմբեր 2011թ.» բառերը փոխարինել «նոյեմբեր 2011թ. – փետրվար 2012թ.» բառերով:

2. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Առաարքտեխ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01002109) 2011 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված՝ N WVA/TAV ADP/SEHS-12/001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ջեռուցման համակարգի սարքավորումների մատակարարում՝ 2924600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

Նախագահ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 փետրվարի 2012 թվականի N Մ-137-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1136-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 20-ի N 3/3.8-1/1909-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 21-ի N ԱԱ/3-4/1432-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան և Բաղանիս համայնքներում խաղահրապարակների տեղադրում» ծրագրի մասին» N Մ-1136-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում և կից ծրագրի 6-րդ, 9-րդ ու 10-րդ կետերում «2643200 դրամ» բառերը փոխարինել «2394450 դրամ» բառերով.

2) ծրագրի 10-րդ կետում «1321600 դրամ» բառերը փոխարինել «1197225 դրամ» բառերով.

3) ծրագրի 8-րդ կետում «Նոյեմբեր-դեկտեմբեր 2011թ.» բառերը փոխարինել «նոյեմբեր 2011թ. – փետրվար 2012թ.» բառերով:

2. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջի սթայլ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 90019529) 2011 թվականի դեկտեմբերի 1-ին կնքված՝ N WVA/TAV ADP/PG-12/001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է խաղահրապարակի խաղասարքերի մատակարարում և տեղադրում՝ 2394450 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**24 փետրվարի 2012 թվականի N Մ-138-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1137-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 20-ի N 3/3.8-1/1888-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 16-ի N ԱԱ/3-4/1289-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևան, Ներքին Կարմիր աղբյուր, Նավուր և Այգեհովիտ համայնքների փողոցային լուսավորության ցանցի ստեղծում» ծրագրի մասին» N Մ-1137-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում և կից ծրագրի 6-րդ, 9-րդ ու 10-րդ կետերում «1486560 դրամ» բառերը փոխարինել «1518760 դրամ» բառերով.

2) ծրագրի 10-րդ կետում «331840 դրամ» բառերը փոխարինել «332150 դրամ» բառերով և «491040 դրամ» բառերը՝ «522310 դրամ» բառերով.

3) ծրագրի 8-րդ կետում «Նոյեմբեր-դեկտեմբեր 2011թ.» բառերը փոխարինել «նոյեմբեր 2011թ. – փետրվար 2012թ.» բառերով:

2. Սահմանել, որ «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՎՀՀ՝ 02528755) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Առսարքտեխ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01002109) 2011 թվականի նոյեմբերի 30-ին կնքված՝ N WVA/TAV ADP/CM-12/001 պայմանագրում (լրացումով) նշված գործարքը, որով նախատեսվում է փողոցային լուսավորության ցանցի սարքավորումների և նյութերի մատակարարում՝ 1518760 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեին:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**27 փետրվարի 2012 թվականի N Մ- 139 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 3-Ի N Մ-071-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2012 թվականի փետրվարի 21-ի թիվ 276 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 3-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 5-ի N Մ-671-Ա որոշման մեջ ու կից ծրագրում փոփոխություն կատարելու և նույն որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում բեռների ներմուծման մասին» N Մ-071-Ա որոշմամ մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում «փոխադրման ծախսերը կազմել են 2446 եվրո» բառերը փոխարինել «փոխադրման ծախսերը կազմել են 3300 ԱՄՆ-ի դոլար» բառերով.

2) որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետում «18 տեղ» բառերը փոխարինել «107 տեղ» բառերով և «փոխադրման ծախսերը կազմել են 3282 եվրո» բառերը փոխարինել «փոխադրման ծախսերը կազմել են 4500 ԱՄՆ-ի դոլար» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　　　　　　　Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**27 փետրվարի 2012 թվականի N Մ- 140 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 26-Ի N Մ-723-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(Ջերմուկ քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Ջերմուկ քաղաքի սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության հիմնադրամի 2012 թվականի փետրվարի 20-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի օգոստոսի 26-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի N Մ-495-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին (N 4)» N Մ-723-Ա որոշման 1-ի կետի 1-ին ենթակետում «ՋՍՏՋԱՀ-ԲԸ-ԱԾԶԲ-01/01» բառերը փոխարինել «ՋՍՏՋԱՀ-ԲԸ-ԱՊԶԲ-01/01» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 փետրվարի 2012 թվականի N Մ - 141 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐՈՒ ԻՆՖԵԿՑԻՈՆ ՀԱԿԱՏՈՒԲԵՐԿՈՒԼՅՈԶԱՅԻՆ ՀԻՎԱՆԴԱՆՈՑ» ՓԲԸ-Ի ՄԱՍՆԱԿԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 1-ի N 3/3.8-1/987-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի փետրվարի 6-ի N 546-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի փետրվարի 1-ի N ՀՔ/22/790 -12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 2-ի N ԱԱ/3-4/ 8462 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 1507200 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ-ի մասնակի կահավորում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՀԱՏՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05500145) 2012 թվականի հունվարի 26-ին կնքված՝ N ՀՀ-Կ-01/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է սույն պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող՝ N 1 հավելվածում նշված գույքի վաճառք, տեղափոխում և տեղադրում՝ 1507200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական

հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան

«30» հունվարի 2012թ.

ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ-ի մասնակի կահավորում

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Մասամբ ապահովել ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ-ն անհրաժեշտ կահույքով |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, առողջապահության բնագավառ |



| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 1.507.200,00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Շիրակի մարզի «Գյումրու ինֆեկցիոն հակատուբերկուլյոզային հիվանդանոց» ՓԲԸ-ն |
| 7. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2012թ. հունվարի 26-ից մինչեւ 2012թ. մայիսի 26-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՀԱՍՏ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ՀՀ-Կ-10/12 Պայմանագրի Հավելված թիվ1-ի համաձայն գույքի պատրաստում, գնում եւ անհատույց հանձնում՝ 1.507.200,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ Առողջապահության նախարարության հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրող գործադիր տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 փետրվարի 2012 թվականի N Մ - 142 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ «ԵՐԵԽԱՆԵՐԻ ՏՈՒՆ» ՊՈԱԿ-Ի ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 6-ի N 3/3.8-1/1266-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի փետրվարի 6-ի N 547-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի փետրվարի 6-ի N ՖԲ/ԱնՄ-5/737-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 3-ի N ԱԱ/3-4/871-12 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի փետրվարի 3-ի N 01/475-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 104683770 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի հիմնանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Շինկարկաս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05521676) 2011 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված՝ N ՀՀ/ԳՄ-1/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 103083770 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՍԹԵՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02555928) 2011 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված N ՀՀ-07/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հեղինակային հսկողություն՝ 600000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ՀԱՅԿԱՍԱՐ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05536845) 2011 թվականի դեկտեմբերի 19-ին կնքված N ՀՀՏՀ-09/11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ 1000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«02» փետրվարի 2012թ.

« ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի հիմնանորոգում »
ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Բարելավել ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի երեխաների կեցության պայմանները |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Շիրակի մարզ, Գյումրի քաղաք, սոցիալական բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 104.683.770.00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ը |

2

| | | |
|---|---|---|
| 7. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2011թ դեկտեմբերի 19-ից մինչեւ 2012թ. սեպտեմբերի 19-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Շինկարկաս» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի «Երեխաների տուն» ՊՈԱԿ-ի վերանորոգում՝ 103.083.770,00 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«ՍԹԵՄ» ՍՊԸ-ի կողմից շինարարական աշխատանքների հեղինակային հսկողություն՝ 600.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի:<br><br>«ՀԱՅԿԱՍԱՐ» ՍՊԸ-ի կողմից շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողություն՝ 1.000.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Շիրակի մարզպետարանի հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 փետրվարի 2012 թվականի N Մ - 143 - Ա**
**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԲԱՎՐԱ ԳՅՈՒՂԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 16-ի N 3/3.8-1/1746-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի փետրվարի 16-ի N 870-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 14-ի N ԱԱ/3-4/1159-12 և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2012 թվականի փետրվարի 15-ի N 01/622-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 85000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Բավրա գյուղի համայնքային կենտրոնի շինարարության նախագծի փորձաքննություն» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Է. Կ. Պ.» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01543457) 2011 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ N 8 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծի վերամշակում, տեղակապում և փաստաթղթերի փորձաքննություն՝ 85000 դրամի չափով՝

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն
Արա Վարդանյան

«16» փետրվարի 2012թ.

« ՀՀ Շիրակի մարզի Բավրա գյուղի համայնքային կենտրոնի շինարարության նախագծի փորձաքննություն »

ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Նպաստել ՀՀ Շիրակի մարզի Բավրա գյուղում համայնքային կենտրոնի կառուցմանը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ<br>(ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 4. | Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը | ՀՀ Շիրակի մարզ, Բավրա գյուղ, սոցիալական բնագավառ |
| 5. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 85.000.00 դրամ: |
| 6. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Շիրակի մարզի Բավրա գյուղի համայնքը |



| | | |
|---|---|---|
| 7. | Ծրագրի իրականացման տեւողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2012թ փետրվարի 01-ից մինչեւ 2012թ. մայիսի 01-ը: |
| 8. | Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Առանձին միջոցառումներ չեն նախատեսվում |
| 9. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Է.Կ.Պ.» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Շիրակի մարզի Բավրա գյուղի համայնքային կենտրոնի կառուցման նախագծի վերամշակման և տեղակապման փաստաթղթերի փորձաքննություն՝ 85.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 11. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն Շիրակի մարզպետարանի հետ: |
| 12. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական

Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 փետրվարի 2012 թվականի N Մ- 144 -Ա**

**քաղ. Երևան**

**«ՀԱՅ ԱՎՍՏՐԻԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 16-ի N 3/3.8-2/1794-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի փետրվարի 16-ի N ՀՔ/22/1207-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 15-ի N ԱԱ/3-6/1261 -12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ավստրիական կարմիր խաչի Արևելյան Տիրոլի շրջանային բաժանմունքի կողմից ուղարկված «Հայ ավստրիական բարեգործական կենտրոն» հասարակական կազմակերպության հասցեով ստացված շտապ օգնության մեքենայի (2003 թվականի արտադրության, «Ֆոլքսվագեն VW T4 Kombi 3-0-0 LR TDI Syncro» մակնիշի, նույնականացման համարը՝ WV2ZZZ70Z3H076828, 5000 եվրո արժեքով, ԱՄ ՄՁՄ ՄՏ, մեքենան բերվելու է Հայաստանի Հանրապետություն իր ընթացքով) ներմուծման ծրագիրը: Շտապ օգնության մեքենան անհատույց հանձնվելու է «Գյումրիի ավստրիական մանկական հիվանդանոց» ՓԲԸ-ին:

2. «Հայ ավստրիական բարեգործական կենտրոն» հասարակական կազմակերպությանը՝ նշված ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 փետրվարի 2012 թվականի N Մ - 145 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 16-ի N 3/3.8-2/1749-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի փետրվարի 15-ի N ՀՔ/22/1159-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 14-ի N ԱԱ/3-6/1155-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Միացյալ Հայկական հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետությունում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված դեղորայքի (11 տեղ, 200 կգ ընդհանուր քաշով, 21300 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 447.18 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո հանձնվելու է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սոցիալական ապահովության նախարարությանը:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**24 փետրվարի 2012 թվականի N Մ- 146 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի -ի N3/3.8-2/ -12, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2012 թվականի փետրվարի –ի N և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի -ի N ԱԱ/3-6/ -12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ատոմային էներգիայի միջազգային գործակալության հետ տեխնիկական համագործակցության ծրագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեի հասցեով ստացված սպեկտրոմետրիկ համակարգի (3 տեղ, 60 կգ ընդհանուր քաշով, 99052 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Ջվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտեին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**24 փետրվարի 2012 թվականի N Մ- 147- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱ-ՐՈՒԹՅԱՆ «Վ. Ա. ՖԱՆԱՐՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՈՒՌՈՒՑՔԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 17-ի N 3/3.8-2/1841-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի փետրվարի 17-ի N ՀՔ/22/12421-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 16-ի N ԱԱ/3-6/ 1291-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության հասցեով ստացված բեռի (արհեստական ռադիոակտիվ իզոտոպ՝ տեխնեցիումի գեներատոր Tc99m, 1 տեղ, 17 կգ ընդհանուր քաշով, 858 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 315.29 եվրո, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Վ. Ա. Ֆանարջյանի անվան ուռուցքաբանության ազգային կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր միջուկային անվտանգության կարգավորման պետական կոմիտե և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**24 փետրվարի 2012 թվականի N Մ - 148 - Ա**
**քաղ. Երևան**

**«ԱՐՑԱԽԻ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 13-ի N 3/3.8-2/1533 -12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 10-ի N ԱԱ/3-6/1033 -12 եզրակացությունները,* ***ո ր ո - շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Դուբայից անհատ բարերարների կողմից «Արցախի ազատամարտիկների միություն» հասարակական կազմակերպության հասցեով ստացված տնտեսական և կենցաղային իրերի (325 տեղ, 17280 կգ ընդհանուր քաշով, 46292.55 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 5019 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» տարածաշրջանային մաքսատուն) ներմուծման ծրագիրը: Բեռն օգտագործվելու է «Արցախի ազատամարտիկների միություն» հասարակական կազմակերպության ադմինիստրատիվ շենքի կառուցման և կահավորման համար:

2. Սույն որոշումն ուղարկել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 փետրվարի 2012 թվականի N Մ- 149 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-883-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱ-ՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 16-ի N 3/3.8-2/1748-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 14-ի N ԱԱ/3-6/1145-12 եզրակացությունները,* ***ո ր ո - շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից բերված՝ ստորև նշված տեսահսկման համակարգի ապրանքները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում» ծրագրի մասին» N Մ-883-Ա որոշմամբ (2012 թվականի հունվարի 20-ի N Մ-065-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի շրջանակներում.

1) 7 տեղ, 91 կգ ընդհանուր քաշով, 4020 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ 590 ԱՄՆ-ի դոլար բեռնափոխադրման ծախսերը, «Զվարթնոց» մաքսատուն.

2) 2 տեղ, 20 կգ ընդհանուր քաշով, 2382 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ 204 ԱՄՆ-ի դոլար բեռնափոխադրման ծախսերը, ՄՓԵՍԱՓԱՄ մաքսատուն.

3) 1 տեղ, 10 կգ ընդհանուր քաշով, 16292 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ 1402 ԱՄՆ-ի դոլար բեռնափոխադրման ծախսերը, ՄՓԵՍԱՓԱՄ մաքսատուն.

4) 5 տեղ, 55 կգ ընդհանուր քաշով, 6546.07 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ 773.72 ԱՄՆ-ի դոլար բեռնափոխադրման ծախսերը, ՄՓԵՍԱՓԱՄ մաքսատուն.

5) 2 տեղ, 32 կգ ընդհանուր քաշով, 4150 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, ներառյալ 313 ԱՄՆ-ի դոլար բեռնափոխադրման ծախսերը, ՄՓԵՍԱՓԱՄ մաքսատուն:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**24 փետրվարի 2012 թվականի N Մ - 150 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-119-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 15-ի N3/3.8-2/1650-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 13-ի N ԱՍ/3-6/1114-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ*** *է.*

1. Սահմանել, որ Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից ձեռք բերված համակարգչային սարքավորումներ (1 տեղ, 17 կգ ընդհանուր քաշով, 5217 ԱՄՆ-ի դոլար արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 415 ԱՄՆ-ի դոլար, «Զվարթնոց» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի «Բաց հասարակության ինստիտուտի օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի (ԲՀԻՕՀՀՄ) կողմից 2011-2012 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-119-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 փետրվարի 2012 թվականի N Մ - 151 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N Մ-059-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 1-ի N 3/3.8-1/984-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 2-ի N ԱԱ/3-4/845-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 20-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հեռուստամարաթոն - 2012» ծրագրի մասին» N Մ-059-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

Երևանի ոսկերչական գործարան – 1 «ԳՆՈՄՈՆ» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02556646) 2012 թվականի հունվարի 16-ին կնքված՝ N Գ-01/12 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է արույր-ոսկեպատ կախիչով և իր տուփով 700 մեդալի պատրաստում՝ 5483100 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**24 փետրվարի 2012 թվականի N Մ- 152 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-883-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 6-ի N 3/3.8-1/1267-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 3-ի N ԱԱ/3-4/870 -11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում» ծրագրի մասին (2-րդ փուլ)» N Մ-883-Ա որոշմամբ (2012 թվականի հունվարի 20-ի N Մ-065-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) և «Նյուիթա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 04109358) 2012 թվականի հունվարի 24-ին կնքված N 06/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր մասնաշենքի հիմնանորոգման համար հավելվածում նշված շինանյութերի մատակարարում՝ 8398200 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00441423) և «Գաջեգործ» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00405114) 2012 թվականի հունվարի 20-ին կնքված՝ N 07/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր մասնաշենքի հիմնանորոգման համար հավելվածում նշված շինանյութերի մատակարարում՝ 4022640 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Արարատցեմենտ» ԲԲԸ-ի (ՀՎՀՀ՝ 04000255) և «Բազալտ Էմ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 09811321) հետ 2012 թվականի հունվարի 25-ին կնքված N 14-Լ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է պորտլանդցեմենտի մատակարարում՝ 4333333 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**24 փետրվարի 2012 թվականի N Մ- 153 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-883-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ) (N 1)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 13-ի N 3/3.8-1/1530-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 9-ի N ԱԱ/3-4/1011-11 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Մատենադարան» հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02705657) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում» ծրագրի մասին (2-րդ փուլ)» N Մ-883-Ա որոշմամբ (2012 թվականի հունվարի 20-ի N Մ-065-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Ալբերտ Կարախանյան և որդիներ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00441423) 2012 թվականի հունվարի 25-ին կնքված՝ N 08 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր մասնաշենքի հիմնանորոգման աշխատանքների իրականացում՝ 32000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Մետալ Լեվո գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 08906499) 2012 թվականի փետրվարի 1-ին կնքված՝ N 08/Մ պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի գլխավոր մասնաշենքի հիմնանորոգման համար մետաղական խողովակների մատակարարում՝ 195480 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ　　　　Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**24 փետրվարի 2012 թվականի N Մ - 154 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N Մ-39-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 14-ի N 3/3.8-1/1623-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կո-միտեի 2012 թվականի փետրվարի 9-ի N ԱԱ/3-4/1010-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի փետրվարի 12-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-39-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

«Էյ-Ի-Ջի-Սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00930884) 2012 թվականի հունվարի 16-ին կնքված՝ N 7-42 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի հունվարի 16-ից մինչև 2013 թվականի հունվարի 16-ը գազասպառման համակարգի տեխնիկական սպասարկում՝ 312350 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 փետրվարի 2012 թվականի N Մ - 155 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N Մ-400-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍՕՍ-ՄԱՆԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԵՐ» ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 13-ի N 3/3.8-1/1531-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 9-ի N ԱԱ/3-4/1009-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 18-ի «ՍՕՍ-մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների երկարաժամկետ ընտանեկան տիպի խնամք և դաստիարակություն» ծրագրի մասին» N Մ-400-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արովյանի համայնքային կոմունալ տնտեսություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հետ (ՀՎՀՀ՝ 03502262) 2012 թվականի հունվարի 9-ին կնքված՝ N 24 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է աղբի հավաքում և փոխադրում՝ 350040 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 փետրվարի 2012 թվականի N Մ - 156 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 18-Ի N Մ-119-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 3-ի N 3/3.8-1/1153-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 3 -ի N ԱԱ/3-4/873-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Բաց հասարակության ինստիտուտ» հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի փետրվարի 18-ի N Մ-119-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ասողիկ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00835755) 2012 թվականի հունվարի 25-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ձեռնարկների տպագրություն՝ 465000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 փետրվարի 2012 թվականի N Մ - 157 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1131-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 6-ի N 3/3.8-1/1268-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 3-ի N ԱԱ/3-4/868 -12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի «Աբովյանի ծննդատուն» ՊՓԲԸ-ի ծնարանային և հետծննդյան բաժինների հիմնանորոգման նախագծում» ծրագրի մասին» N Մ-1131-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 7-րդ կետում «2011թ. դեկտեմբերի 30-ը» բառերը փոխարինել «2012թ. ապրիլի 12-ը» բառերով:

2. Սահմանել, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Է.Կ.Պ.» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01543457) 2012 թվականի հունվարի 12-ին կնքված՝ N 2 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախագծանախահաշվային փաստաթղթերի փորձաքննություն՝ 170000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 փետրվարի 2012 թվականի N Մ- 158 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-883-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով «Մատենադարան» հիմնադրամի տնօրենի 2012 թվականի փետրվարի 6-ի N 14 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2011 թվականի հոկտեմբերի 21-ի «Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցում» N Մ-883-Ա որոշմամբ (2012 թվականի հունվարի 20-ի N Մ-065-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 10-րդ կետի 3.2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.2. շինարարական աշխատանքը 229330000».

2) 10-րդ կետի 3.3 ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3.3. դռներ և պատուհաններ 52000000»:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ու Մ

**24 փետրվարի 2012 թվականի N Մ- 159 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 30-Ի N Մ-032-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ԱՐԱԲԿԻՐ» ՄԻԱՑՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 21-ի N 3/3.8-2/1953-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի փետրվարի 21-ի N ՀՔ/221317/-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 20-ի N ԱԱ/3-6/1382-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Բելգիայի ՆԱՖ ասոցիացիայի կողմից «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված փոխպատվաստվող երիկամի կոնսերվացնող հեղուկը (Կուստոդիոլ) և պերֆուզիոն կանուլան (1 տեղ, 14 կգ ընդհանուր քաշով, 1604 եվրո արժողությամբ, բեռնափոխադրման ծախսերը կազմում են 246 ԱՄՆ-ի դոլար, «ՄՓԵւՄԱՓԱՄ» մաքսատուն) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2009 թվականի հունվարի 30-ի «Արաբկիր» միացյալ մանկական բարեգործական հիմնադրամի կողմից 2009-2013 թվականներին իրականացվող «Ազգաբնակչության առողջության պահպանմանը և բժշկասոցիալական զարգացմանն աջակցություն» ծրագրի մասին» N Մ-032-Ա (2011 թվականի նոյեմբերի 25-ի N Մ-1025-Ա որոշման խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**14 մարտի 2012 թվականի N Մ- 160 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2012 թվականի փետրվարի 24-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՔԱՐԱԿԵՐՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 15-ի N 3/3.8-1/1649-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի փետրվարի 15-ի N 02/782-12, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2012 թվականի փետրվարի 15-ի N 03/07-1/1501-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 13-ի N ԱԱ/3-4/1134-12 ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2012 թվականի փետրվարի 13-ի N 01/04.2/417-12 գրությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Հայաստանի մանուկների հիմնադրամի կողմից իրականացվող՝ 640000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ «Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Քարակերտ համայնքի միջնակարգ դպրոցի հիմնանորոգում» ծրագիրը (կցվում է):

2. Հայաստանի մանուկների հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի մանուկներ հիմնադրամի» հոգեբարձուների խորհրդի նիստում

07 փետրվարի 2012

ՀՀ Արմավիր մարզի Քարակերտ համայնքի թիվ 1 միջնակարգ դպրոցի հիմնանորոգում — ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Ծրագրի անվանումը | | ՀՀ Արմավիր մարզի Քարակերտ համայնքի թիվ 1 միջնակարգ դպրոցի հիմնանորոգում |
| 2 | Ծրագրի նպատակները | | ՀՀ Արմավիրի մարզի, Քարակերտ համայնքի, թիվ 1 միջնակարգ դպրոցի համալիր հիմնանորոգում |
| 3 | Բարեգործները և ֆինանսավորման աղբյուրները | | Հայաստանի Մանուկներ Հիմնադրամ, ԱՄՆ 162 Fifth Avenue, Suite 900, New York, NY 10010 |
| 4 | Ծրագրի կատարողը | | «Հայաստանի մանուկներ հիմնադրամ», ՀՀ, ք. Երևան 0001,Հյուսիսային պողոտա 1-ին շենք, 8-րդ հարկ, 24 սենյակ, ՀՎՀՀ 02569972, «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/հ 15700 10241550100, |
| 5 | Ծրագրի իրականացման վայրը | | ՀՀ Արմավիր մարզի Քարակերտ համայնք |
| 6 | Ծրագրի բյուջեն | | 640 000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ (վեց հարյուր քառասուն հազար ԱՄՆ դոլար)՝ առանց ԱԱՀ |
| | Մանրամասն Բյուջե Արժեքները ներկայացված են ԱՄՆ դոլարով | | Մասնաշենքեր |
| | | 1 | Պատեր - 25 000 |
| | | 2 | Տանիք - 120 000 |
| | | 3 | Միջնորմեր - 11 000 |
| | | 4 | Հատակներ - 98 000 |
| | | 5 | Բացվածքներ - 95 000 |
| | | 6 | Աստիճանավանդակ ներքին - 7 000 |
| | | 7 | Հարդարման աշխատանքներ - 112 000 |
| | | 8 | Արտաքին հարդարում - 35 0000 |
| | | 9 | Տարածքի մաքրում շին. աղբից - 7 000 |
| | | 10 | Ներքին ջրամատակարարում - 7 000 |
| | | 11 | Ներքին կոյուղի - 7 000 |
| | | 12 | Ներքին ջեռուցում - 15 000. |
| | | 13 | Էլ. սարքավորումներ - 12 000. |
| | | 14 | Էլ. լուսավորություն - 9 000 |
| | | 15 | Կաթսայատուն - 40 000 |
| | | 16 | Արտաքին էլ. սնուցում - 5 000 |
| | | 17 | Արտաքին ջերմամատակարարում - 18 000 |
| | | 18 | Արտաքին ջրամատակարարում - 5 000 |
| | | 19 | Արտաքին կոյուղի - 12 000 |
| | | | ԸՆԴԱՄԵՆԸ - 640 000 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ, առանց ԱԱՀ-ի: |
| 7 | Բարեգործություն ստացողը | | ՀՀ Արմավիր մարզի Քարակերտ համայնքը |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | | 01.03.2012 - 01.03.2013 |
| 9 | Միջոցառումները (ըստ փուլերի, եթե այդպիսիք հնարավոր է առանձնացնել) նկարագրությունը և ժամկետները անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | | Շինարարությունը կիրականացվի մեկ փուլով: Շինարարական աշխատանքների իրականացման համար «ԿԱՆԱԿԱ» ԲԲԸ ի հետ կնքվելու է պայմանագիր ծրագրի բյուջեում ֆիքսված ամբողջ գումարի չափով: |
| 10 | Ձեռք բերվելիք (ներմուծվող) ապրանքներ, ծառայությունների և աշխատանքների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | | Բեռների ներմուծում ծրագրով չի նախատեսվում: Ծրագրի շրջանակներում օգտագործվող անհրաժեշտ շինանյութերը ձեռք կբերվի կապալառուի միջոցով, համապատասխան կնքված պայմանագրի, որը կազմում է 270 000 ԱՄՆ դոլար: |

| | | | |
|---|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսեր | | Կազմակերպչական ծախսեր նախատեսված չէ: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների այլ կազմակերպությունների հետ | | Նախատեսվում է համագործակցել ՀՀ Կառավարության Բարեգործական Ծրագրերը համակարգող հանձնաժողովի, ՀՀ Արմավիրի մարզպետարանի և Արմավիր մարզի Քարակերտ համայնքի համայնքապետարանի հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողություն իրականացվելու է ԱՄՆ Children of Armenia Fund (COAF) բարեգործական հիմնադրամի և ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի ներկայացուցիչների կողմից: |

Հայաստանի մանուկներ հիմնադրամի գործադիր տնօրեն

Սերոբ Խաչատրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**14 մարտի 2012 թվականի N Մ- 161 -Ա**
**(Որոշումն ընդունվել է 2012 թվականի փետրվարի 24-ի նիստին)**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի N Մ-129-Ա, 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 28-Ի N Մ-120-Ա, N Մ-121-Ա ԵՎ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N Մ-052-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 15-ի N 3/3.8-1/1701-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի փետրվարի 21-ի N 02/982 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 16-ի N ԱԱ/3-4/1277-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մարտի 5-ի N Մ-129-Ա, 2011 թվականի փետրվարի 28-ի N Մ-120-Ա, N Մ-121-Ա և 2012 թվականի հունվարի 20-ի N Մ-052-Ա որոշումներում «Սեյվ դը չիլդրեն ֆեդերեյշն, ինկ.» կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ» բառերը փոխարինել «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչություն» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 փետրվարի 2012 թվականի N Մ-162-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի N Մ-318-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿ-ՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 17-ի N 3/3.8-2/1838-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի փետրվարի 17-ի N ՀՔ/22/1243-12 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 16-ի N ԱԱ/3-6/1292-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Առաքելություն Արևելք» մարդասիրական օգնության կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից Նիդերլանդներից ծեռք բերված բեռը (պահպանակներ, 214 տեղ, 10647 տուփ, 5732.35 կգ ընդհանուր քաշով, 54636.30 ԱՄՆ-ի դոլար արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» Տ/Մ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 7-ի «Աջակցություն Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ին հակազդման ազգային ծրագրին, փուլ 1» ծրագրի մասին» N Մ-318-Ա (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հոկտեմբերի 29-ի N Մ-738-Ա և 2011 թվականի հոկտեմբերի 21-ի N Մ-862-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**24 փետրվարի 2012 թվականի N Մ- 163 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ- 228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 15-ի N 3/3.8-2/1704-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի փետրվարի 15-ի N ՀՔ/22/1167-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 14-ի N ԱԱ/3-6/1146-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) հասցեով ստացված բեռը (թեստ հավաքածուներ՝ «Murex HIV AG/AB combination ELISA kit 96 tests» 300 տուփ և լաբորատոր ծախսանյութ «Sulfuric acid» 2 տուփ, 3 տեղ, 193.9 կգ քաշով, 27910.36 ԱՄՆ-ի դոլար արժեքով (փոխադրման ծախսերը՝ 1194.4 եվրո), «Զվարթնոց» մ/տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**24 փետրվարի 2012 թվականի N Մ-164-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N Մ-361-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 22-ի N 3/3.8-1/1971-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 22-ի N ԱԱ/3-4/1469-12 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի (ՀՎՀՀ՝ 01538594) կողմից կնքված՝ ստորև նշված հաշվով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլյոզի և դեղորայքակայուն տուբերկուլյոզի վերահսկման ինտեգրված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Վահագն Մելիք-Մարտիրոսյան» ԱՁ-ի հետ (ՀՎՀՀ՝ 21304935) 2012 թվականի փետրվարի 15-ին կնքված N ՓԱ150212 հաշվում նշված գործարքը, որով նախատեսվում է համակարգչի, հոսանքի ԱՍՍ-ի և մոնիտորի գնում՝ 472333 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 փետրվարի 2012 թվականի N Մ-165-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N Մ-035-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 22-ի N3/3.8-2/2000-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի փետրվարի 21-ի N ՀՔ/22/1352-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 21-ի N ԱԱ/3-6/1434-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի հունվարի 20-ի «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության կողմից 2012 թվականի ընթացքում իրականացվող՝ «Պարբերական հիվանդությամբ երեխաների բուժման (անվճար դեղորայքով մշտական ապահովում)» բարեգործական ծրագրի մասին» N Մ-035-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «44160 եվրոյին համարժեք դրամ» բառերը փոխարինել «46000 եվրոյին համարժեք դրամ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ Ֆրանսիայից «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպության հասցեով ստացված բեռը («Կոլխիցին» դեղորայք՝ 5 տեղ, 453 կգ ընդհանուր քաշով, 46000 եվրոյին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Զվարթնոց» Մ/Տ) ներմուծվում է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Մ. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ
տնօրեն ............ Կամո Տեր-Պետրոսյանի կողմից

«15» փետրվարի 2012թ.

«ՀՈՎԱՐԴ ԿԱՐԱԳՅՈԶՅԱՆ» ԲԺՇԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2012թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԲՈՒԺՄԱՆ (ԱՆՎՃԱՐ ԴԵՂՈՐԱՅՔՈՎ ՄՇՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ)»
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է Պարբերական հիվանդությամբ տառապող երեխաների մշտական դեղորայքով ապահովումը՝ երիկամների վաղահաս ամիլոիդոզը-երիկամային անբավարարությունը և հաշմանդամությունը կանխելու համար: |
| 2 | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով, օգտվել հարկային արտոնություններից |
| 3 | Բարեգործը | Հովարդ Կարագյոզյան Հիշատակի Ընկերակցություն (ԱՄՆ – Նյու-Յորք) |
| 4 | Ծրագիրը կատարողը | «Հովարդ Կարագյոզյան» բժշկական բարեգործական հասարակական կազմակերպություն՝ իրավաբանական հասցեն - ք. Երևան, Նորքի Այգիներ-180, հարկ վճարողի հաշվառման համարը՝ ՀՎՀՀ-01533153, «Արաբկիր» բժշկական համալիր, ՀՀ առողջապահության նախարարության Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոն: |

| | | |
|---|---|---|
| 5 | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է ՀՀ բոլոր մարզերում, Երևան քաղաքում, ԼՂՀ-ում, հիմնական հետազոտությունները, բժշկական հսկողությունը և դեղորայքի բաշխումը կատարվելու է «Արաբկիր» բժշկական համալիրի Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնի մասնագետների կողմից: |
| 6 | Ծրագրի բյուջեն | Ծրագիրը ֆինանսավորվում է ամերիկյան Հովարդ Կարագյոզյան հիշատակի ընկերակցության կողմից, որի ընդհանուր արժեքն է 46.000 եվրոյին համարժեք դրամ:<br><br>դեղորայք - «կոլխիցին» 1 մգ - 460.000 հաբ(23.000 տուփ, 1տուփը 20 հաբ)՝ 46.000 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ (ներառյալ տրանսպորտային ծախսերը)<br>(Ձեռք է բերվելու Ֆրանսիայում) |
| 7 | Բարեգործություն ստացողը | Շահառուներն են ՀՀ բոլոր մարզերի, ԼՂՀ-ի և Ջավախքի պարբերական հիվանդությամբ հիվանդ՝ կենտրոնում հաշվառված և 2012թ. ընթացքում նոր հայտնաբերվող, 0-18 տարեկան երեխաները: |
| 8 | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է: Աշխատանքի նշված ծավալներն ու ծախսերը նախատեսված են 2012թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ժամկետի համար: |
| 9 | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2012թ. ծրագրով նախատեսվում է պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնում հաշվառված 2019 և նոր հայտնաբերված մոտ 300 0-18 տարեկան հիվանդների ընթացիկ հսկողություն և բուժում (անվճար մշտական դեղորայքի բաշխում) ամբողջ տարվա ընթացքում: |
| 10 | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ Ֆրանսիայից գնելու է 460.000 հաբ «Կոլխիցին» 1մգ դեղորայքը, Փարիզ-Երևան օդանավով տեղափոխելու է Երևան և հանձնելու պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնին՝ հիվանդներին անվճար բաշխելու համար:<br>46.000 եվրոյին համարժեք դրամի ընդհանուր արժողությամբ 460.000 հաբ «Կոլխիցին» 1մգ դեղորայքի ներմուծում՝ որպես հումանիտար բեռ: |



| | | |
|---|---|---|
| 11 | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Տրանսպորտային ծախսեր՝ ընդհանուր գումարի 3%-ի չափով: |
| 12 | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը համաձայնեցված է ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարությունների, «Արաբկիր» բժշկական համալիրի և Պարբերական հիվանդության մանկական հանրապետական կենտրոնի տնօրինությունների հետ: |
| 13 | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ և ԼՂՀ առողջապահության նախարարություններ, ՀՀ մարզպետարանների առողջապահության վարչություններ , պարբերական հիվանդությամբ հիվանդ երեխաների ծնողներ, «Հովարդ Կարագյոզյան» ԲԲՀԿ և «Արաբկիր» բժշկական համալիրի տնօրինություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**24 փետրվարի 2012 թվականի N Մ-166Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14-Ի N Մ-361-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ (Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 22-ի N 3/3.8-2/1999-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի փետրվարի 22-ի N ՀՔ/22/1353-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 21-ի N ԱԱ-1/3-6/1447-12 եզրակացությունները, **ո ր ո շ ու մ  է**.

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով Ֆրանսիայից ստացված բեռը (17 տեղ, 545 կգ ընդհանուր քաշով, 58091.39 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 2694.19 եվրո, ցանկը կցվում է, «Զվարթնոց» ՄՏ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի հունիսի 14-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Տուբերկուլոզի և դեղորայքակայուն տուբերկուլոզի վերահսկման ինտեգրացված ծրագրի ընդլայնումը Հայաստանի Հանրապետությունում» ծրագրի մասին» N Մ-361-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

## Ստացվող բեռի ցանկ

համաձայն N 97108, 97126, 97540, 97197, 97199, 97374 հաշիվ ապրանքագրերի

| Նօ | Անվանում | Քանակ | Գին/Եվրո |
|---|---|---|---|
| 1 | Պրոթիոնամիդ, 250 մգ, հաբ | 1800 | 244.44 |
| 2 | Ցիկլոսերին 250 մգ դեղապատիճ | 15000 | 8979.00 |
| 3 | Կլոֆազիմին, 100 մգ, փափուկ դեղապատիճ | 12000 | 14871.60 |
| 4 | Ցիկլոսերին 250 մգ դեղապատիճ | 13200 | 7901.52 |
| 5 | Կապրեոմիցինի սուլֆատ, 1գ հիմքով, փոշի, սրվակ | 1900 | 9500.00 |
| 6 | Պարա-ամինոսալիցիլինային թթու (PAS) 4գ, գրանուլներ պարկերում | 6810 | 10662.19 |
| 7 | Իզոթերմայ արկղ | 1 | 198.30 |
| 8 | Իզոթերմայ արկղ | 1 | 35.00 |
| 9 | Պարա-ամինոսալիցիլինային թթու (PAS) 4գ, գրանուլներ պարկերում | 3150 | 4931.85 |
| 10 | Իզոթերմայ արկղ | 4 | 140.00 |
| 11 | Սառցե խցիկ, 111լ (Vestfrost MF 114), 230V | 1 | 505.23 |
| 12 | Հոսանքի [illegible] սահմանափակիչ, 185/245V, 220/230V համար, 16A | 1 | 122.26 |
| | Ընդամենը | | 58091.39 |

Հայաստանյան Մասնաճյուղ
01538594
M.S.F. Filiale D'Armenie

Կոդ 3/6.2

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**24 փետրվարի 2012 թվականի N Մ- 167-Ա**

# ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ 2012-2014 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թականի փետրվարի 16-ի N 3/3.8-1/1747-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի փետրվարի 13-ի N 02/715-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի փետրվարի 9-ի N ՖԲ/ԱնՄ-5/802-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի փետրվարի 9-ի N ՀՔ/22/1020-12, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 16-ի NFB8B-A50B-F628 ու Երևանի քաղաքապետի 2012 թվականի փետրվարի 15-ի N 02/34-6455-ի եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել Միսիոներների բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Սպիտակ, Իտալական թաղամաս, ՀՎՀՀ՝ 06924578) 2012 - 2014 թվականներին իրականացվող՝ 49243320 դրամ ընդհանուր արժեքով «Հաշմանդամ երեխաների խնամք և բուժում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով Միսիոներների բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված գործարքներն անմիջականորեն կապված են նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի «Հյուսիս» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2008 թվականի սեպտեմբերի 19-ին կնքված N 370015 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցում՝ 250000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ԱրմենՏել» ՓԲԸ-ի «Նոր-Նորք» տեղամասի հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2006 թվականի սեպտեմբերի 19-ին կնքված N 010899813 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի ծառայությունների մատուցում՝ 500000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2007 թվականի մարտի 1-ին կնքված N 75-260 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի



փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարում՝ 250000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

4) «ՀայՌուսգազարդ» ՓԲԸ-ի Երևանի ԳԳՄ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2007 թվականի փետրվարի 1-ին կնքված N Կ.017.01.07.4507 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի փետրվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում գազամատակարարման ծառայությունների մատուցում՝ 1000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

5) «Կանաչ-Բարձրունք» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01524084) 2011 թվականի նոյեմբերի 23-ին կնքված N 1 պայմանագրում և դեկտեմբերի 12-ի N 1 հավելվածում նշված գործարքը, որով նախատեսվում է կոյուղագծերի կառուցման աշխատանքների իրականացում՝ 1660804 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Մավաէքսիմ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02243668) 2012 թվականի հունվարի 9-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2012 թվականի փետրվարի 1-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում հիգիենիկ պարագաների ձեռքբերում՝ 12000000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

3. Միսիոներների բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն՝ ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Երևանի քաղաքապետին:

ՆԱԽԱԳԱՀ    Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Միսիոներների բարեգործական կազմակերպության հայկական

մասնաճյուղի Երևանում լիազորված անձ քույր Էլիժբետայի կողմից

«13» փետրվար 2012թ.

## ՄԻՍԻՈՆԵՐՆԵՐԻ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ «ՀԱՇՄԱՆԴԱՄ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԽՆԱՄՔ ԵՒ ԲՈՒԺՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Մտավոր և ֆիզիկական արատ ունեցող երեխաների խնամք և բուժում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Հնդկաստանի Հանրապետությունում Մայր Թերեզայի կողմից հիմնադրված Միսիոներների Բարեգործական կազմակերպությունը /Missionaries of Charity, India, Calcutta, 700016 (WB), 54A AJC Bose road, Park street/ և քույր Մարիամ Քոմանդեր /Հոլանդիա / |
| 4. | Ծրագիրը կատարողը | Միսիոներների Բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղը /ք.Սպիտակ, Իտալական թաղամաս, ՀՎՀՀ 06924578 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ, ք. Երևան, Նորք-Մարաշ վարչական շրջան,Նորք 7 փողոց,37 և 39 տուն<br>Սոցիալական և առողջապահական բնագավառներ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 52 մլն. 660 հազար 804 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի, որը տրամադրվելու է Միսիոներների բարեգործական կազմակերպության կենտրոնական գրասենյակի և քույր Մարիամ Քոմանդերի կողմից |
| 7. | Բարեգործություն ստացողը | Մտավոր և ֆիզիկական արատ ունեցող որբ և լքված երեխաները՝ սույն ծրագրի շրջանակներում ընդգրկված են 22 երեխա մինչև 7 տարեկան |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրն շարունակական է, սկսվել է 1988թ.-ին, տվյալ ծրագրի իրականացման սկիզբը՝01 հունվար 2012թ.,ավարտը՝31 դեկտեմբեր 2014թ. |



| | | |
|---|---|---|
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Մայր Թերեզայի գթության քույրերի խնամակալության տակ գտնվող և նույն տանը բնակվող 22 հաշմանդամ երեխաներին հնարավորինս լիարժեք կյանքի ապահովում: Օրը 3 անգամյա սնունդ և դեղորայքի ընդունում (անվճար), կամավորների օգնությամբ երկու դպրոցահասակ երեխաների տեղափոխումը սայլակներով միջնակարգ դպրոց,նոր կոյուղագծի կառուցում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Իրականացվող ծրագրի արժեքը ՝ 52 մլն. 660 հազար 804 ՀՀ դրամ առանց ԱԱՀ-ի, նախատեսվում է՝<br>• Սննդի համար՝ 18 մլն (տասնութ միլիոն) ՀՀ դրամ, տարեկան 6 մլն (վեց միլիոն) ՀՀ դրամ<br>• Դեղորայքի և բուժ. պարագաների համար՝ 12 մլն (տասներկու միլիոն) ՀՀ դրամ, տարեկան 4 մլն (չորս միլիոն) ՀՀ դրամ<br>• Հիգիենիկ պարագաների համար՝ 12 մլն (տասներկու միլիոն) ՀՀ դրամ, տարեկան 4 մլն (չորս միլիոն) ՀՀ դրամ<br>• Հեռախոսակապի համար՝ 1 մլն 500 հազար (մեկ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ, տարեկան 500 հազար (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ<br>• Ջրամատակարարման համար՝ 750 հազար (յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, տարեկան 250 հազար (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ<br>• Էլեկտրաէներգիայի համար՝ 750 հազար (յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, տարեկան 250 հազար (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ<br>• Գազի համար՝ 3 միլիոն (երեք միլիոն) ՀՀ դրամ, տարեկան 1մլն. (մեկ միլիոն ) ՀՀ դրամ<br>• Նոր կոյուղագծի կառուցում 1 մլն. 660 հազար 804 (մեկ միլիոն վեց հարյուր վաթսուն հազար ութ հարյուր չորս) ՀՀ դրամ<br>Այլ ծախսեր /տրանսպորտային, հատուկ վիրահատությունների հետ կապված և այլ չնախատեսված ծախսեր/ ՝ 3 մլն (երեք միլիոն դրամ) |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագիրը նախատեսում է 520 հազար ՀՀ դրամի կազմակերպչական ծախսեր (սննդի, հեռախոսակապի, էլեկտրաէներգիայի, գազի, ջրամատակարարման և այլ ծախսերի համար), որը ծախսվում է Մայր |

| | | |
|---|---|---|
| | | Թերեզայի գթության քույրերի և կամավորների անձնական կարիքների համար և կազմում է ծրագրի բյուջեի 1% -ը: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման շրջանակներում Միսիոներների Բարեգործական կազմակերպության հայկական մասնաճյուղը համագործակցելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, Առողջապահության նախարարության, Երևանի քաղաքապետարանի,Սոցապի և Նորք – Մարաշ վարչական շրջանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման նկատմամբ վերահսկողությունը իրականացնելու է Միսիոներների Բարեգործական կազմակերպության ղեկավարության, ՀՀ Կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի և Նորք – Մարաշ վարչական շրջանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից: |

Փաստաթուղթը կազմեց` Հովհաննիսյան Հասմիկ / 374 –10 / 27.44.49
(ազգանունը, անունը, հեռախոս)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**24 փետրվարի 2012 թվականի N Մ-168-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 3-Ի N Մ- 228-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԲԵՌԻ ՄԱՍԻՆ («Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագիր) (1)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի փետրվարի 22-ի N 3/3.8-2/2001-12, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2012 թվականի փետրվարի 23-ի N ՀՔ/22/1396-12 Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի փետրվարի 22-ի N ԱԱ/3-6/1464-12 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ  է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի, տուբերկուլյոզի և մալարիայի դեմ պայքարի Գլոբալ հիմնադրամի միջև կնքված՝ դրամաշնորհային ծրագրերի միջոցներով ձեռք բերված «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (ՊՈԱԿ) հասցեով Հնդկաստանից ստացված բեռը (դեղեր՝ «Դիդանոսին» 250 մգ N 30-12 տուփ, «Լամիվուդին» 10 մգ/մլ 240 մլ - 9 տուփ, «Զիգովուդին» 50 մգ/մլ 240 մլ - 31 տուփ, «Դիդանոսին» 400 մգ N 30-35 տուփ և «Նևիրապին» 50 մգ/5 մլ 240 մլ - 32 տուփ,  7 տեղ, 32 կգ քաշով, 1000.15 ԱՄՆ-ի դոլար արժեքով (փոխադրման ծախսերը 8759 հնդկական ռուփի), «Զվարթնոց» մ/տ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 3-ի «Հայաստանի Հանրապետությունում ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի դեմ պայքարի ազգային ծրագրին աջակցություն» դրամաշնորհային ծրագրի մասին» N Մ-228-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ - ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**5 մարտի 2012 թվականի N Մ - 169 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՄԱՎԻՐԻ ԹԵՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի մարտի-ի N 3/3.8-1/ և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի մարտի -ի N ԱԱ/3-4/ եզրակացությունները, **ո ր ո շ ու մ է**.*

1. Բարեգործական որակել ռոստովաբնակ բարերար Արթուր Կարապետյանի միջոցներով Հայ առաքելական Սուրբ եկեղեցու Արմավիրի թեմի հասցեով ուղարկված NISSAN մակնիշի ավտոմեքենայի (2005 թվականի արտադրության, նույնականացման համարը՝ 5N1AR18W85C759165, 13.500 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ) ներմուծման ծրագիրը: Ավտոմեքենան տրամադրվելու է Հայ առաքելական Սուրբ եկեղեցու Արմավիրի թեմին:

2. Հայ առաքելական Սուրբ եկեղեցու Արմավիրի թեմին՝ նշված ավտոմեքենայի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**7 մարտի 2012 թվականի N Մ-170-Ա**
**(Որոշումն ընդունվել է 2012 թվականի փետրվարի 3-ին)**
**քաղ. Երևան**

**«ԱՌ-ԴԱ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲԱՐԵԿԵՑԻԿ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԾԵՐՈՒԹՅՈՒՆ 3» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2012 թվականի հունվարի 26-ի N 3/3.8-1/769-12, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2012 թվականի հունվարի 27-ի N 343-12, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2012 թվականի հունվարի 26-ի N ՖԲ/ԱնՄ-5/382-12 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2012 թվականի հունվարի 30-ի N ԱԱ/3-4/671-12 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամի 2012 թվականի մարտի 6-ի N Կ-06/03 գրությունը,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Պարույր Սևակի 9, ՀՎՀՀ՝ 00057312) իրականացվող՝ 370500000 դրամ ընդհանուր արժողությամբ «Բարեկեցիկ մանկություն և ծերություն 3» ծրագիրը (կցվում է):

2. «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Արարատի, Լոռու, Շիրակի ու Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամի
գործադիր տնօրեն Հ. Ստեփանյան կողմից
2012 թվականի մարտի 6-ին

«Բարեկեցիկ մանկություն և ծերություն 3» ծրագիր

| | |
|---|---|
| 1. Ծրագրի նպատակը | Սոցիալական աջակցություն Երևանի 112, Գյումրու 108 միայնակ, հաշմանդամ ծերերին, ծնողազուրկ և բազմազավակ ընտանիքներին: Բարեգործական օգնության տրամադրում միայնակ և հաշմանդամ ծերերի ու բազմազավակ ընտանիքների խնամքով զբաղվող պետական կառույցներին և ոչ առևտրային կազմակերպություններին: |
| 2. Ծրագրի բարեգործական որակման նպատակները | Օրենքով սահմանված կարգով օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |
| 3. Բարեգործը | ԱՄՆ-ի «Հայ ավետարանի առաքելություն» շահույթ չհետապնդող կազմակերպություն |
| 4. Ծրագիրը կատարողը | «ԱՌ-ԴԱ» բարեգործական հիմնադրամ (քաղ. Երևան, Պարույր Սևակի փող. 9, ՀՎՀՀ՝ 00057312): |
| 5. Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Երևան, Գյումրի քաղաքներ, Արագածոտնի, Արարատի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզեր: Բնագավառը՝ սոցիալական: |
| 6. Ծրագրի բյուջեն | 370,500,000 դրամ՝ յուրաքանչյուր տարի 123,500, 000 դրամ: |
| 7. Բարեգործություն ստացողը | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երևանի 112 և Գյումրու 108 ընտանիքներ, ինչպես նաև՝<br><br>1. Երևանի թիվ 125 և թիվ 163 դպրոցներ,<br>2. Երևանի Միրզոյանի անվան թիվ 5 երաժշտական դպրոց,<br>3. Երևանի թիվ 8 հատուկ կրթահամալիր,<br>4. «Զատիկ մանկատուն» ՊՈԱԿ<br>5. Երևանի թիվ 30, 38, 46, 78, 90, 100, 103, 139 և 149 մանկապարտեզներ,<br>6. Երևանի թիվ 13 և «Զեյթուն» պոլիկլինիկաներ,<br>7. «Սբ. Գրիգոր Լուսավորիչ» և «Սբ. Աստվածամայր» բժշկական կենտրոններ,<br>8. Հայաստանի մանկապատանեկան հիմնադրամ,<br>9. «Ջերմիկ անկյուն» հիմնադրամ,<br>10. «Հայաստանի ուսանողական ջոկատների հանրապետական շտաբ» հասարակական կազմակերպություն,<br>11. «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն, |

| | |
|---|---|
| | <u>ՀՀ Արագածոտնի մարզ</u><br><br>1. Ապարանի քաղաքային համայնք,<br>2. Ապարանի թիվ 1 և թիվ 2 մանկապարտեզներ,<br>3. Լուսագյուղի գյուղական համայնք,<br>4. Նիգավանի գյուղական համայնք,<br>5. «Սահակ-Մեսրոպ» բարեգործական հասարակական կազմակերպություն,<br><br><u>ՀՀ Արարատի մարզ</u><br><br>1. Նշավանի գյուղական համայնք, հիմնական դպրոց և մանկապարտեզ,<br>2. Գեղանիստ համայնքի «Մանուշակ» մանկապարտեզ,<br><br><u>ՀՀ Լոռու մարզ</u><br><br>1. Վանաձորի քաղաքային համայնք, թիվ 5 և թիվ 30 մանկապարտեզներ,<br><br><u>ՀՀ Տավուշի մարզ</u><br><br>1. Կայանի հիմնական դպրոց,<br><br><u>ՀՀ Շիրակի մարզ</u><br><br>1. Գյումրու քաղաքապետարան,<br>2. Գյումրու թիվ 12 մանկապարտեզ,<br>3. Գյումրու «Երեխաների տուն» ՊՈԱԿ<br>4. Պեմզաշենի երաժշտական դպրոց,<br>5. Շիրակի մարզի ավետարանական-մկրտական եկեղեցի,<br><br>Հայ առաքելական եկեղեցու Արարատյան, Արագածոտնի, Գուգարաց, Շիրակի, Սյունիքի և Տավուշի թեմեր և ոչ առևտրային կազմակերպությունների շահառուներ, որոնց անվանական ցուցակը յուրաքանչյուր բեռնարկղի բաշխման ցանկի հետ կներկայացվի հանձնաժողովի հաստատմանը: |
| 8. Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը շարունակական է: Այն իրականացվում է 2002 թվականից: Ծրագրի այս հատվածն իրականացվելու է 2012 թ. հունվարի 1-ից մինչև 2014 թ. դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում: |
| 9. Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | - ամենամյա դրամական օգնության և ամենամյա ջեռուցման ծախսերի տրամադրում – 24,500,000 դրամ.<br>- բարեգործական օգնության /հագուստ, կոշիկ, սնունդ, բժշկական, հիգիենիկ և այլ պարագաներ/ տրամադրում – 346,000,000 դրամ: |

| | |
|---|---|
| 10. Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | - բարեգործական օգնության ներմուծում /հագուստ, սնունդ, կոշիկ, հիգիենիկ և այլ պարագաներ/ - 316,000,000 դրամ:<br>- տեղում սննդամթերքի գնում – 30,000,000 դրամ: |
| 11. Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Ծրագրի համար լրացուցիչ կազմակերպչական ծախսեր նախատեսված չեն, ծրագիրն իրականացվում է հիմնադրամի ընդհանուր կազմակերպչական ծախսերի հաշվին: |
| 12. Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների հետ | ՀՀ աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն, Արարատի, Արագածոտնի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետարաններ, Երևանի, Գյումրու քաղաքապետարաններ: |
| 13. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունների և բարերաների պարբերական այցելությունների միջոցով: |